ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՄԱՐԿՈՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԱՐԳԱՎԱՆԴԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(հոկտեմբեր 1, շաբաթ)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Գնացեք ահա, ուղարկում եմ ձեզ
իբրև գառներ գայլերի մեջ»
(Ղուկ. Ժ 3)

Սիրելի՛ հավատացյալներ,

Այսօր Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում մեր Տեր Հիսուս Քրիստոսի Յոթանասուներկու աշակերտների հիշատակի օրն է: Հին Կտակարանում հրեաների համար յոթանասուներկու թիվը խորհրդանշական էր. իրենց ժողովարանը յոթանասուներկու հոգուց էր բաղկացած, աշխարհում գոյություն ունեցող բոլոր ազգերը, ըստ հրեաների, յոթանասուներկուսն էին և այլն: Թերևս Ղուկաս ավետարանիչը հենց այս նկատառումով նշում է այս յոթանասուներկուսի առաքելության մասին՝ կարծես ցույց տալով, որ ինքը ևս հավատում էր, որ մի օր պիտի գա, երբ ամբողջ աշխարհի բոլոր յոթանասուներկու ազգերը դարձի եկած պիտի լինեն: Հետաքրքրական է, որ մյուս ավետարանիչներից և ոչ ոք չի խոսում յոթանասուներկու աշակերտների մասին. հիշենք. չէ՞ որ Ղուկասն ինքն էլ հենց յոթանասուներկու աշակերտներից մեկն էր: Այս յոթանասուներկուսը, որոնց մենք աշակերտ ենք անվանում, ըստ Եկեղեցու հայրերի, առաքելահավասար, առաքելապատիվ այրեր էին՝ առաքյալներ:

Ավետարանական դրվագում կարդում ենք, որ Քրիստոս ուղարկում է այս աշակերտներին և տարբեր պատգամներ տալիս նրանց՝ ասելով, թե հունձքը շատ է, իսկ մշակները՝ սակավ, և կոչ անում, որպեսզի աղաչեն հունձքի տիրոջը, որ իր հունձքի համար մշակներ հանի: Քրիստոս պատվիրում է իր աշակերտներին չվերցնել ո՛չ քսակ, ո՛չ դրամ, ո՛չ զավազան, ոչինչ ավելորդ, որ կարող էր իրենց խանգարել քարոզչական գործում: Նրանք պետք է մտնեին յուրաքանչյուր տուն, և որ տուն որ մտնեին, խաղաղություն պիտի տային այդ տանը և եթե այդ տանը, ինչպես Ավետարանում է ասվում, «ողջույնի որդի» լիներ, այսինքն՝ աշակերտների ողջույնն ընդունվեր և պատասխան ստանար, նրանք պիտի մնային այդ տանը, վայելեին այդ տան հյուրասիրությունը: Քրիստոս աշակերտներին պատվիրում է բժշկել այդ տան հիվանդներին և, որ ամենակարևորն էր, ասել նրանց, թե մոտեցել է Աստծո Արքայությունը: Քրիստոս առաքում է իր աշակերտներին ու ասում.«Ահա

ուղարկում եմ ձեզ իբրև գառներ գայլերի մեջ»: Եթե բնությունն ուսումնասիրելու լինեք, ապա կտեսնեք, որ երբ մեր գյուղերում հովիվներն իրենց գառնուկները տանում են սարերն արածեցնելու, ապա երբեմն վրա են հասնում գայլերն ու փորձում հոշոտել նրանց: Բայց հետաքրքրականը գայլերի գործելակերպն է. գայլը շատ անգամ, բռնելով մի գառան, պոկում է սրա վրայից մորթին և իր վրա գցած, որպես գառ ներկայանալով, մտնում է հոտի մեջ ու այդպիսով նոր գառների խաբում ու թակարդը գցում: Սիրելիներ, այդպես են նաև այսօրվա խելահեղ ընթացքով ապրող աշխարհի սատանայական որոգայթները, որոնք լարված են գրեթե ամենուր:

Սիրելի՛ հավատացյալներ, մենք էլ որպես Քրիստոսի գործի շարունակողներ՝ աշխարհիկ, թե քահանա, եթե մկրտվել ենք և վերստին ծնվել մեր Մայր Եկեղեցու Սուրբ ավազանից, ապա այսօր պարտավոր ենք իրագործել Քրիստոսի տված պատգամներն ու շարունակել առաքյալների և աշակերտների սկսած քարոզչական հզոր աշխատանքը: Յոթանասուներկու աշակերտները մեզ համար լավագույն օրինակ կարող են լինել: Մենք էլ պիտի առաջնորդվենք այն պատգամներով, որոնք Քրիստոս փոխանցեց այս յոթանասուներկուսին: Չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրն իր ապրած կյանքով, իր կենցաղավարությամբ քայլող քարոզ է, օրինակ մնացյալների համար: Միջնադարյան միսիոներական պատմություններից մեկում կարդացի, թե ինչպես էին դարձի բերում Աֆրիկայի տեղաբնիկներին. նրանք վերցնում էին քրիստոնեական կենցաղ ունեցող առաքինի մի ընտանիք և ուղարկում էին ինչ-որ մի գյուղ: Այս ընտանիքը, քարոզչական գործունեություն չէր իրականացնում, Սուրբ Գիրք չէր ուսուցանում աֆրիկացի տեղաբնիկներին, այլ միայն ապրում էր իր քրիստոնեավայել կյանքով: Եւ փորձը ցույց տվեց, որ երբեմն այս կերպ իրականացվող քարոզչությունն առավել զորավոր ու ազդեցիկ էր լինում: Երբ այս մարդիկ որպես գառներ գնում մտնում էին գայլերի մեջ ու շարունակում էին ապրել իրենց Տիրոջը հավատարիմ կյանքով, սա ավելի մեծ ազդեցություն էր ունենում: Հետաքրքրական է սակայն, որ եթե գայլերը կարող են այլ կերպարանքով ներկայանալ, ապա մենք այլևս չունենք այդ հնարավորությունը, քանզի մենք գառներ ենք՝ գայլերի մեջ եւ անհնար է, որ գառը գայլի մորթի հագնի: Իսկ մենք ինչ ենք անում. մենք ավելի շատ տրտնջում ենք, նեղսրտում ենք այն բանից, ինչ որ տեղի է ունենում մեր երկրում, մեր հասարակության մեջ, ինչու չէ, նաև մեր եկեղեցում, քաղաքական-հասարակական գործիչներից ենք բողոքում, հոգևորականներից ենք դժգոհում, ուր մնաց մեր գառ լինելու մասին մտածենք: Անշուշտ, բողոքների մի մասը ճշմարտացի են, սակայն ես ուղղակի կուզենայի մի պահ հիշել Քրիստոսի ապրած դարաշրջանը, երբ առաքյալներն ամենուր հալածվում էին և հետապնդվում, երբ առաքյալները բառիս բուն իմաստով, որպես գառներ հոշոտվում էին գայլերից: Տեսե՛ք, բոլոր առաքյալները նահատակություն ընդունեցին. մեկ հոգի գիտենք միայն, որ իր մահով մահացավ՝ Հովհաննես ավետարանիչը, որին էլ սակայն այնքան տանջեցին, որ մահից վատ էր: Առաքյալներից և ոչ մեկը մեր ունեցած հանգիստ կյանքը չտեսավ, սակայն առաքյալներից և որևէ մեկը չտրտնջաց, այլ առավել մեծ եռանդով ու նվիրվածությամբ շարունակեց Աստծո խոսքի քարոզչությունն

ու Քրիստոսին մատուցելիք ծառայությունը: Մարկոս ավետարանչին Ալեքսանդրիայի փողոցներում այնքան քաշքշեցին, ծեծեցին, մինչև որ մահացավ, Անդրեաս առաքյալին խաչաձև խաչեցին, Պետրոս առաքյալին գլխիվայր խաչեցին, Պողոս առաքյալին գլխատեցին, Հակոբոսին տաճարի պարապից ներքև գցեցին. որևէ մեկին չեք կարող գտնել, որ հանգիստ կյանք ունեցած լինի, սակայն միևնույն ժամանակ, սրանցից և որևէ մեկի գործը անկրկնելի ու անիրականանալի էր առանց անմնացորդ նվիրումի և անտրտունջ խոնարհության: Հիմա այս լույսի ներքո մի պահ քննեցեք ձեր կյանքը, արդյո՞ք այս նույն դժվարություններն ունենք մենք այսօր: Քրիստոնյաներն առաջին դարում Հռոմում գիշերները հավաքվում էին կատակոմբներում՝ ժայռափոր գերեզմաններում, որովհետև դա միակ վայրն էր, որտեղ իրենց չէին հետապնդի: Առաջին դարի քրիստոնյաներին մեղադրում էին մարդակերության և արնախմության ծանրագույն հանցանքների մեջ. մենք այսօր արդյո՞ք նմանատիպ դժվարություն ունենք: Երբ Առաքելական հայրերից Պողիկարպոս Զմյուռնիացի Հայրապետին տարան նահատակության և պիտի այրեին, մի բան խնդրեց միայն. ասաց, որ իրեն չամրացնեն փայտին: Ութսունվեց տարեկան հասակում այս ծերունին առանց ամրացվելու ինքնակամ մնաց հրի մեջ՝ իր անսասան սերն ու նվիրվածությունն ապացուցելով Տիրոջ առաջ: Նորից ու նորից, փա՛ռք քեզ Տեր, որ մենք այսօր հեռու ենք այս տեսակ փորձություններից: Բայց միևնույն ժամանակ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան իր յուրահատուկ փորձություններն ունի: Ուղղակի, երբ մարդը խեղդում է իր խղճի ձայնը, երբ մարդը փակում է իր հոգու դռները, նա այլևս ի զորու չէ ըստ ամենայնի ընկալելու և ըմբռնելու իր առջև ծառացած մարտահրավերների ահռելի ծանրությունն ու կորստաբեր զորությունը:

Օրվա Ավետարանն ահա մեզ կոչ է անում խորհելու այս ամենի շուրջ և հիշեցնում է, որ մենք պետք է մեր ներսում եղած լույսը չթաքցնենք, այլ լուսավորենք նրանով մեր շրջապատն ու մեզ շրջապատող մարդկանց: Լինել գառ գայլերի մեջ՝ նշանակում է ապրել գայլերի մեջ և ամենուր, առանց ավելորդ համեստության փաստել գործով և վարքով մեր քրիստոնյա լինելը: Տեսե՛ք, Ավետարանը չի ասում քարոզել այն մարդկանց, ովքեր պատրաստ են քրիստոնեությունն ընդունելու, այն ասում է եղեք գառներ գայլերի մեջ, այսինքն՝ քարոզեցեք քրիստոնեությունը նրանց, ովքեր չեն ուզում այն, ովքեր կտրականապես դեմ են և թշնամական վերաբերմունք ունեն նրա հանդեպ: Իսկ մենք անգամ մեր հարազատներին ու բարեկամներին չենք քարոզում և չենք խոսում Ավետարանից, այն դեպքում, երբ շատ անգամ նրանք դեմ չեն այդ ամենին:

Իմ ցանկությունն է, որ Աստված մեզ բոլորիս ուժ, եռանդ ու մտքի պայծառություն տա, որպեսզի կարողանանք ճիշտ ընկալել մեր Տիրոջ և Փրկչի քավչարար տնօրինությունը ու խիզախ ոգով և մաքուր սրտով մտնել գայլերի մեջ՝որպես գառներ:

Շնորհ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն: